Ա. Ի. ԱՐԵՎԻԿՅԱՆ

ՈՉՄԻ ԲԱՐԲԱՌԸ

(Ձևաբանություն. գոյական. ածական. թվական)

Ոզմի բարբառի ձևաբանական կառուցվածքը շատ ուշագրավ է։ Այն շրջման եզրեր ունի Վանի, Շատախի և Մոկսի բարբառների քերականական կառուցվածքի հետ, բայց և զգալիորեն տարբերվում է իր բազմաթիվ յուրահատկություններով։ Հենց այդ տարբերություններն էլ նկատի ունենալով, հայ բարբառագետներից պրոֆ. Ա. Ղարիբյանը և գոց. Ա. Գրիգորյանը Ոզմի «լեզուն» դիտում են իբրև առանձին բարբառ[1]։

Ինոզներս, որ բուն ոզմեցիներ են և հիանալի պահպանել են մայրենի բարբառը, մյուս ոզմեցիների նման հպարտությամբ ասում են. «մընք՝ Վանա Շատխա լիզու կրխասկնանք՝, նարոնք՝ Հոզմա լիզու չըն խասկնա» (խոսքը վերաբերվում է բուն բարբառին և ոչ թե ծածկալեզվին, որով Ոզմի խոսացվածքը բացառիկ տեղ է գրավում հայ բարբառների մեջ)։ Անշուշտ, ոզմեցիների այս ասածի մեջ կա որոշ չափազանցություն, որ գալիս է ինչպես յուրաքանչյուր բարբառը կրողի, այնպես էլ ոզմեցու՝ իր բարբառը մյուսներից խիստ տարբեր տեսնելու ձգտումից։ Բայց փաստ է այն, որ Ոզմի բարբառը մոտ ու հեռու գտնվող բարբառներից զգալիորեն տարբերվում է։

Երբ Ոզմի բարբառի հնչյունական ու ձևաբանական իրողություններն ու բառապաշարը համեմատում ենք մեծավաստակ հայագետ Հր. Աճառյանի նկարագրած Վանի բարբառի[2] և բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Մուրադյանի շատ արժեքավոր «Շատախի բարբառի»[3] համապատասխան երևույթների հետ, համոզվում ենք, որ Ոզմին յուրահատուկ գիրք է գրավում և առանձնանում է մյուսներից իբրև ինքնուրույն բարբառ։ Մենք այդ յուրահատկությունները մանրամասնորեն ներկայացնում ենք մեր «Ոզմի բարբառը» մենագրական ուսումնասիրության առաջին մասում, իսկ այս հոդվածում՝ բարբառի ձևաբանության մի մասը, որ յուրաքանչյուր հետաքրքրվող համեմատելով Վանի ու Շատախի բարբառների հիշյալ հետազոտությունների համապատասխան երևույթների հետ, հեշտությամբ կտեսնի տարբերություններն ու ընդհանրությունները։

Ոզմի բարբառը «կը» ճյուղի բարբառներից մեկն է։ Այդ ճյուղի մյուս բարբառների նման սա ևս սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմում է դրաբարի ձևով՝ բալասկգրին ավելացնելով կը, երբ այն սկսվում է բաղաձայնով (կուիմ>կըկովիմ, վերանամ>կրվիրանամ) և կ, երբ սկսվում

---

1 Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, 1953, էջ 93, Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, 1957, էջ 89։

2 Հր. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1952։

3 Մ. Հ. Մուրադյան, Շատախի բարբառը, Երևան, 1952։

է ձայնավորով (եփեմ>կիփիմ, ապրեմ>կապրիմ). Անշուշտ, միշտ չէ, որ բայաձևը լրիվ համապատասխանում է գրաբարին, և բարբառի հնչյունափոխական ու ձևաբանական օրենքներով պայմանավորված՝ հանգես է գալիս որոշ փոփոխությամբ։

ԴՈՅԱԿԱՆ

Հոգնակիի կազմությունը

Ոզմի բարբառում տարբեր հոգնակերտ մասնիկներ կան՝ -իր, -ներ, -ք || -ք՛, -տիր, -քիր, -քաիր, -վիրք, -անք || անք, -ինք, -ընիք || ծնք, -տար || -տար, -վանք։

Սրանցից տարածվածներն են մի քանիսը։

Միավանկ բառերը, մեծ մասամբ, հոգնակին կազմում են իր մասնիկով. ինչպես՝ արջ—առճիր, բահ—պահիր, գալ—կ՛էլիր, գետ—կ՛իտիր, գիւղ—կ՛ը-ղիր, գործ—կուրծիր, թուր—թուրիր, հաց—իացիր, տուն—տրնիր, ցաւ—ցա-վիր, փոր—փուրիր և այլն։ Սրանցից քուր բառի ու-ն փոխվելով ը-ի, երբեմն հոգնակին լինում է ըբրիր։

Միավանկ սիրտ բառի հոգնակին կազմվում է նաև ներ-ով (սրրտներ)։

Ջիւղ բառի հոգնակին լինում է նաև կ՛ի՛ղրանք։

Ի-ով վերջացող միավանկ բառերից իր բառը գործածվում է թիյակ, որը ստանալով տիր մասնիկը դառնում է թիյակտիր։ Ոսկ ագի բառի հոգնակին լի-նում է ծիյանք։

Ու-ով վերջացող միավանկ բառերի հոգնակին լինում է իր մասնիկով, որից առաջ տեղի է ունենում ու>վ հնչյունափոխություն, ինչպես՝ լու—լ՛ը-վիր, ձու—ծ՛ըվիր։

Բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերի հոգնակերտ սովորական մասնիկն է ներ, ինչպես՝ արջառ—աճառներ, բոժոժ—պըժոժներ, դանակ—տանա-կներ, երես—ըրիսներ, կոճակ—կոճակներ, ջրաղաց—ճէղցներ և այլն։ Այս կարգի շատ բառեր ունեն տիր, քաիր հոգնակերտ. ինչպես՝ աման—ամանք-տիր, բերան—բէրանքտիր, անուն—անունքտիր, ձմերուկ—ծըմէրուկտիր, տախտակ—տախտակտիր, տոպրակ—տոպրակտիր և այլն։ Մի շարք բառեր հոգնակի են կազմում և՛ -ներ, և՛ -տիր կամ -քիր վերջավորությամբ. ինչ-պես՝ դանակ—տանկրներ և տ՛ընկրտիր, կոճակ—կուճկրներ և կուճկրտիր, երես—ըրիսներ և ըրիսք՛իր և այլն։ Իր վերջավորությամբ հոգնակի ունեն բո-ներ, խնձոր, կաքաւ և այլ բառեր, որ լինում են՝ բանիրքիր, խրնձաբքիր, կաքավքիր։

Բազմավանկ այն բառերը, որոնց վերջի հնչյունն է ի, հոգնակին կազ-մում են մեծ մասամբ ք || ք՛ մասնիկով. օրինակ՝ ածելի—առծրլէք՛, կաշի—կաշիք, հալելի—խէլիք՛, մատանի—մատնիք, ոսկի—ըսկէք՛, ուսկէք՛, ուռի—օռէք՛, քամի—քամէք, քեռի—ք՛էռէք։

Այս խմբի բառերից ագի բառի փոխարեն գործածվում է պուչ (<պոչ), որի հոգնակին լինում է պուչնիք։ Աղաւնի բառը ստանալով կ, հոգնակին լի-նում է առավնիկնիք, յաղվընէ—յաղվընէք՛։ Այգի բառի փոխարեն օգտագործ-վում է հաղար—հաղարք՛իր։

Բանալի բառը վերջում ստանում է ա, և հոգնակին լինում է պալնիսքիր։ Ջորի բառի հոգնակին ար՝ մասնիկով ունի ճիրք՝ ձեր։

Հոգի բառի հոգնակին լինում է երկու ձևով՝ իուկիճիր և իուկ՝ եք՝։

Նկատելի է, որ վերջնահնչյուն ի-ն հաճախ հնչյունափոխվում է ե-ի, երբ բառը հոգնակի մասնիկ է ստանում. ինչպես՝ ոսկի—ըսկեր, տարի—տարեք՝, քեռի—ք՝եռեր և այլն։

Որդի բառը բարբառում սակավ է գործածվում, փոխարինվում է ուղա բառով, որ լինում է տըղեճիր։

Ու ձայնավորով վերջավորվող բազմավանկ բառերը ունեն -ճիր, որից առաջ առկա է ու>վ հնչյունափոխությունը. առու—հեռվրճիր, կատու—կատվըճիր։ Լեզու բառի հոգնակին է լիզուք՝։

Ա(յ)-ով վերջավորվող բազմավանկ բառերի հոգնակին լինում է -ք՝/ք՝-ով. ինչպես՝ ակռայ—ակռեք՝, բակլայ—բակլեք՝, երեխայ—յերեխեք՝, կրեայ—կըրյաք, չուխայ—չուխեք՝, սատանայ—սատանեք՝, փեսայ—փեսեք՝։

Վկայ բառի հոգնակին է վըկանիր, -ք/ք՝ հոգնակերտից առաջ ունենք այ>ա հնչյունափոխություն, ինչպես երևում է վերևի օրինակներից, բացի կրեայ բառից, որ մնում է անփոփոխ։

Բրաբարում վերջաձայն ն ունեցող բառերի բարբառային հոգնակերտ մասնիկն է իր, որից առաջ աշխարհաբարի մեջ եզակի թվում ընկած ն-ն վերականգնվում է. գառն—կառնիր, դուռն—տ՝ռոնիր, եղն—իզնիր, թոռն—թուռնիր, ծունկն—ծընգնիր, հարսն—խարսնիր, ձուկն—ձըկնիր, մատն—մատնիր, մատք՝իր, մուկն—մըկնիր, նուռն—նըռնիր, ոտն—վոտնիր, վուք՝իր (ա-ն սակավ է հնչվում), որդն—օրթիր։

Այս կանոնից շեղվում են՝ կաւն—կամիր, կուռն—կուռիր, որոնց ն-ն չի վերականգնվում։

Մեկուկես վանկ ունեցող բառերի հոգնակին լինում է և՛ իր, և՛ ճիր, և՛ ք՝իր մասնիկներով. ինչպես՝ ասող—ասալըճիր, սանտր—սանդրիր, մեղր—մեղրիր, ոսկր—ուսկուրք՝իր։

Ճիպռ բառը բարբառում լինում է ճըպռեխ, որի եխ բաղադրիչը հավանաբար սովորական եռ (հյութ-եղ, համ-եղ, մս-եղ) ածանցն է ոտ ածանցի իմաստով. ստանալով ճիր մասնիկը, հոգնակին լինում է ճըպռեխնիր, նաև ճըպռեխք՝իր։

Մարմնի զույգ անդամներ արտահայտող բառերի հոգնակին միատեսակ չի կազմվում. օրինակ՝ աչք—աչկիր (իր), ծունկն—ձընգնիր (ճիր), ականջ—ականջք՝իր (ք՝իր), յոնք—ընք՝վիր (վիր), ձեռք—ձեռրիր, ձ՝ռնիր (իր)։

Ընտանիքի, տոհմի, գերդաստանի իմաստ արտահայտող բառերի հոգնակին կազմում է անք, ինք, օնք/ենք մասնիկներով. ինչպես՝ Տավթանք (Դավիթենք), Քոսինք (Քոսոնք), Նոշկանք (Նուշիկենք), Մըչօնք, Շ՝էրոնք։

Հավաքական իմաստ արտահայտող բառերը հոգնակի են ունենում մի քանի ձևով. օրինակ՝ փշուր>փուռշըրվանք (վանք), փըշըրտանք (տանք), փըշուրնիր (նիր), փըշուրք՝իր։

Մի քանի բառեր, որոնք շատ բարբառներում հոգնակիի սովորական ձևերից շատ են շեղվում, Ողմի բարբառում հոգնակիի հետևյալ ձև են ունենում. մարդ—մարտիր (իր), կին, կնիկ—կընկտիր (տիր), քոյր—քուրիր (իր), եղբայր—ախպէրք՝իր (ք՝իր), ամիրայ—ամըրըստաք (տաք)։

Քոյր բառը վերջին բաղաձայն ունեցող բարդ բառերի հոգնակի թվում -իր վերջավորության փոխարեն լինում է -ների (մորք՛ուրների)։

Ողմի բարբառի հոգնակի թվի այս նկարագրությունից երևում է, որ՝

ա) Հոգնակերտ մասնիկները բավականաչափ շատ են։

բ) Շատ ավելի տարածված են իր, ներ, ք/ք՛, տիր, քիր /ք՛իր։

գ) Հոգնակերտ մասնիկները, որոշ բացառությամբ, օրինաչափ գործածություն ունեն և պայմանավորված են վանկաքանակով (միավանկ, բազմավանկ), բառերի արտահայտած նշանակությամբ (ինչ իմաստ են արտահայտում), վերջնահնչյունի որակով (ու վերջավորվող և ի-ով բառեր) և այլն։

դ) Մի քանի մասնիկներ կազմությամբ բաղադրյալ են (տ+իր, ք՛+իր, վ+իր, թ(<ո)+ան+ք և այլն), որոնցից միայն վերջին հոգնակերտ բաղադրիչն է արտահայտում հոգնակի թվի իմաստ, դրանից առաջ եղած մյուս մասնիկները ժամանակի ընթացքում կորցրել են այդ իմաստը։

ե) Հոգնակերտ մասնիկի ավելացմամբ տեղի է ունենում բառամիջի ձայնավորների հնչյունափոխություն (ի>է, ու>վ, այ>է, ո>ու և այլն)։

Հոլովում

Ինչպես կը ճյուղի բոլոր բարբառները, Ողմին ևս ունի 6 հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական։ Չկա ներգոյական հոլով, դրա իմաստն արտահայտվում է սեռական հոլովով և մըչ, մեչ կապով։

Ուղղական հոլովը բառի ուղիղ ձևը լինելով, գործածվում է և անորոշ առումով, և՛ որոշյալ։ Առաջին դեպքում բառը կարող է անորոշ հոդ ընդունել կամ ոչ մի հոդ էլ չընդունել, իբրև անորոշ հոդ հանդես է գալիս մի-ն։

Անորոշ թոխթ ընգավ (թուղթ ընկավ), մի թոխթ ընգավ (մի՝ անորոշ, թուղթ ընկավ), տըղա էկավ, մի տըղա էկավ։

Որոշյալ առման դեպքում ուղղականը ստանում է որոշիչ հոդ, երբ բառը վերջանում է ձայնավորով։ Այս պարագայում հոդը լինում է ն-ն.

Էսա ծին թոխ ա (այս ձին թուխ է), մէ փեսեն կ՛էրթա (մեր փեսան գնում է)։

Բաղաձայնով վերջացող բառերը սովորաբար որոշիչ հոդ չեն ընդունում, ինչպես Վանի բարբառը. ընու խեր, մեր էկէն (նրա հայրը, մայրը եկան). անունց խերիր, մերիր էկէն (նրանց հայրերը, մայրերը եկան)։

Հոդ չեն ընդունում նաև հատուկ անունները (անձնանունները, տեղանունները), ինչպես՝ Կարապիտ կ՛էրթա, ախպեր կը կ՛ա (Կարապետը գնում է, եղբայրը գալիս է). Վան քաղաք ա, Հուլիմ կ՛էղ ա (Վանը քաղաք է, Ողմը գյուղ է). Ամրо մըկա լէ կա (Ամրոն այժմ էլ կա՝ ապրում է)։

Սեռական հոլովը նայած թե գոյականները ինչ հնչյունով են վերջանում կամ ինչ են ցույց տալիս, հոլովական տարբեր վերջավորություններ ունեն։ Սեռականի վերջավորություններն են՝ ի, ու/ա, ա/ա, ան/ան, վան, օր, ուչ, իր, օ։

Սեռական հոլովով բառերը հոդ չեն ընդունում։

Տրական հոլովը ընդհանուր առմամբ նման է սեռականին, միևնույն վերջավորությունները նաև տրական հոլովի մեջ են հանդես գալիս։ Տրական հոլովը, սակայն, տարբերվում է սեռականից, այդ տարբերությունը հանդես է

գալիս, երբ գոյականը գործածվում է որոշյալ առումով, այս դեպքում սեռական հոլովաձևին ավելանում է որոշիչ հոդ. ինչպես՝ ձի տրվին մայրու, ձի տրվին էսա մայրուն:

Հայցական հոլովը որոշ առանձնահատկություններ ունի, որոշյալ առման դեպքում սովորաբար հոդ չի ստանում, անձի անունները ձևով հաճախ նման են տրականին. որոշյալ հայցականը երբեմն ստանում է ըզ(զ) նախադիրը. օրինակ՝ ծ'օն սըրպա (ձյունը մաքրիր). օրաք' պի (ուրագը բեր), ըմ ախպոր կուզիմ (իմ եղբորը սիրում եմ), իս (ըս) տեսա Հուզիմ, Վ.ան (ես տեսել եմ Ղազիմը, Վանը), ախպէր ս'ուրաչ կը տրփա (եղբայրը ծեծում է քրոջը), էկէն փախցուցին ըզձը (եկան փախցրին ինձ): Բայց նաև՝ °ուսկեն իպի (ոսկին բերեց), որտեղ հոդ է ընդունել որոշյալ հայցականը. կամ՝ տօ" կը սիրըս զ'ախճիկ (դու սիրում ես (այն) աղջկան), որի մեջ անձի անունը հայցականում նման է ուղղականին:

Բացառական հոլովի սովորական վերջավորությունն է են. ինչպես՝ մօրեն, կ'ըրք'են (գրքից), սարեն, ք'ուրաչեն (քրոջից), կուտուշք'իրեն (կոտոշներից): Բացի սրանից, ոչ քիչ դեպքում բացառական է կազմվում ից, ուց, օց վերջավորությամբ. ինչպես Վանի բարբառի մեջ է. այսպես՝ կա յերմընգ'են և յերմընգ'ից, մրոնրմեն և մրոնրմուց, կ'եանից, ախպօրից, ախպերք'իրօց և այլն:

Անձնանունները ունեն բացառականի մի ուրիշ ձև ևս՝ մեն բառամասնիկով, որը դրվում է սեռական հոլովաձևի վրա. ինչպես՝ խօրեն և խօր մեն (հորից), կընգ'ամեն և կընգ'ան մեն (կնոջից). տիրաչեն և տիրաչ մեն (տիրոջից):

Բացառականի այս վերջավորությունները առկա են նաև հոգնակի թվում. ուսկրոնիրեն (ոսկորներից), կ'ռ'ղրանք'են (գյուղերից), մրոնիմք'իրեն և մրոնիմք'իրուց, ք'եռեցեն և ք'եռեց մեն և այլն:

Գործիական հոլովի վերջավորությունն է օվ//օվ. օրինակ՝ խուցով, ծըէթով, ճ'օ" բով, Վանով, հաովընընէրով, կ'ըղրանք'ով (հացով, ձեթով, ջրով, Վանով, առուներով, գյուղերով): Գործիական հոլովի մի այլ ձև է վե բառամասնիկով բաղադրյալ ձևը, այս բառ-մասնիկը դրվում է ուղղական ձևի վրա, վերջադաս. ինչպես՝ սար վե, կ'ըղրանք վե, պատ վե (սարով, գյուղերով, պատով): Բերված օրինակներից երևում է, որ վե բառ-մասնիկը մեծ մասամբ գործածվում է տեղ, տարածություն արտահայտող կամ որպես այդպիսին մրտածվող գոյականների հետ:

Ներգոյական հոլովը չկա Ղզմի բարբառում, ինչպես այն չկա կը ճյուղին պատկանող բոլոր բարբառներում: Դրա իմաստը արտահայտվում է մի քանի ձևով.

ա) Սեռական հոլովով մէջ կամ մըջ կապով, ըստ որում առաջին դեպքում մէջ-ը լինում է ետադաս, իսկ երկրորդ դեպքում մըջ-ը նախադաս. ինչպես տան մէջ և մըջ տան:

բ) Հայցական հոլովով և ինի ետադրությամբ. իսօ" նգ' ինի (խնկի մեջ), կըժիր ինի (կժերի մեջ):

գ) Սեռական հոլովաձևով. Շուշիկ Քավառա յա (Շուշիկը Քավառում է):

դ) Հայցական հոլովաձևով. հուզէմ վըրվակ չը կէր. թադիս կէր (Ղզմում վերմակ չկար, թաղիք կար): Հուզէմ կրոիվ չիլէլ (Ղզմում կռիվ չի եղել), էն քաղաք է (նա քաղաքում է):

և) Բացառականի վն. բառ-մասնիկը նաև ներգոյականի իմաստ է արտահայտում հայցականի հետ, ինչպես՝ մо՞ի վն. *(մխի մեջ, մխում)։*

Այս ամենից ավելի տարածված է առաջին ձևը։

Հոլովումներ

Ինչպես արդեն ասել ենք, գոյականները ենթարկվում են տարբեր հոլովման։ Այժմ քննենք դրանցից յուրաքանչյուրը առանձին։

Առաջին հոլովում՝ ի

Այս հոլովման վերջավորություններն են՝ սեռական և տրական -ի, բացառական ից, ից, գործիական ով//օվ։

Հոգնակի սեռական-տրականը լինում է ի, ու, *բացառականը* ից, ից, ուց, *գործիականը* ով//օվ, *օրինակ՝*

Ուղ.	ճօղ	ճըղիր	*մարթ*	*մարթիր*
Ս.	ճըղի	ճըղիրի	*մարթի*	*մարթիրի*
Տ.	ճըղի	ճըղիրի	*մարթի*	*մարթիրի*
Հ.	ճօղ	ճըղիր	*մարթ(ի)*	*մարթիր(ի)*
Ր.	ճըղէն	ճըղիրէն	*մարթէն*	*մարթիրէն*
Գ.	ճըղով	ճըղիրով	*մարթով*	*մարթիրով*

Այսպես են հոլովվում մեծ թվով գոյականներ. ինչպես՝

ա) ազգ>ասկ, աթոռ>աթ՞ուռ, ականջ>ականջ, աղ>աղ, աղբ>ախպ, աղբիւր>հախպիւր, աղուն>աղուն, աղքատ>ախկատ, ամպ>ամբ, անէծք>անէսկ, անիծ>անիծ, անձրև>անձրէվ, աշակերտ>աշկէրտ, աստղ>աստըխ, արիւն>էրուն, արմուկն>յերմօնգ՝։

բ) Կենդանիների և թռչունների անունները. ինչպես՝ աղուէս>աղվէս, այծ>յէծ, արծիվ>առծիվ, խոզ>խօղ,

ոչխար>օխճար	*քուռեակ>ք՝օռակ*
ուղաւնեակ>յէղվընիկ	*օձ>՞օց*
արջ>առճ	*գոմէշ>կ՝օմէշ*
մրջիւն>մըռճիմ	*արջառ>աճառ*
ուլ>՞ուլ	*կռունկ>կըռ՞ունգ*

գ) Ու-ով վերջացող մի քանի բառեր. ինչպես՝ լու>լ՞ու, լըվի, լըվից, լըվէն, լըվով. ձու>ծ՝ու, ծ՝ըվի, ծ՝ըվից, ծ՝ըվով։

Թրու և կծու *բառերը, որ բարբառում լինում են* թըրօ *և* կըծօ, *եզակի սեռականում ունենում են* ա *վերջավորություն՝* թըրվա, կըծվա. *ըստ որում* ու>օ-*ից առաջ տեղի է ունենում* ու>օ>վ *հնչյունափոխություն։*

Լեզու>լիզու *բառի սեռականը ունի -ը հոլովիչը, որ երբեմն հանդես է դալիս նաև այլ բառերում։*

դ) Ենթակայական դերբայը, ինչպես՝ եփող—էփօղ, խմող—խըմ՞օղ, լիզող—լիզօղ, գրել—կ՝ըրօղ, դիմանալ—տ՝իմացօղ, լցնել—լ՝ըցօղ, խմեցնել—խըմցօղ, երևալ—էրէվ(ա)ցօղ, լալ—լաց՝օղ, լվանալ—վըլացօղ, մոռանալ—մօռցօղ, նստել—նըստօղ, ուտել—կէրօղ, սիրել—սիրօղ, փափկիլ—փափկ՞օղ։

ե) Ուղղականում — ութիւն>ութէն-ով վերջացող բառերը. բարեկամութիւն>պէրէկամութէն, գէշութիւն>կ'էշութէն, խաչելութիւն>խաչէլութէն, հարսնութիւն>խարսնութէն, մարդութիւն>մարթութէն, ուրախութիւն>հուրախութէն։

զ) Փոխառյալ բառերը. ինչպես՝

դուշման>դուշման, դուշմ(ա)նի,

իշտահ>իշտահ, իշտահի։

Երկրորդ հոլովում՝ ու/ում

Այս հոլովման վերջավորությունները են՝ սեռ. ու//ում, *տրկ.* ու'/ում, *բաց.* էն, ուց/ում, *գործ.* օվ/ օվ։

Հոգնակի սեռ. ու//ում, *տրկ.* ու//ում, *բաց.* ուց//ում, էն, *գործ.* օվ//ով։

Այս հոլովման ենթարկվում են՝

ա) Ուղղականում ի-ով *վերջացող բառերը. ինչպես՝ գարի>կ'արի, գինի>կ'ինի, ոսկի>՞օսկի, քամի>ք'ամի, հոգի>խ՞օկ'ի, որբևայրի>ուրփրվէրի, խնամի>իրնամէի, մաքի>մաքէի, ջորի>ճարէի, քենի>ք'էնի, քեռի>ք'էռի, հայելի>խէյլի, ձի>ծ'ի։*

Այս կարգի բառերից կաշի *բառի սեռականը ունի* ի *վերջավորություն, որով և ուղղականն ու սեռականը իրար նման են՝* կաշի *(կաշի կըա՞ուր)։ Նույնն է նաև* ուռի *բառը (օռի ճուղ)։* Սամի *բառի սեռականը լինում է* սամը *(սամը ծէր)։*

բ) ա(յ)-*ով վերջացող բառերը. երեխայ>յէրէխա, յէրէխու, -ուց, -օվ, ճամփայ>ճամփախ, չուխայ>չօխա, վկայ>վըկա, սատանայ>սատանա, հինայ>խինա։*

Տղայ *և* փեսայ *բառերի սեռականը* ա-*ով է վերջանում.* տըղա *անուն,* փէսա *անուն (տղայի անունը, փեսայի անունը)։*

Բակլայ *բառը գործածական չէ։*

գ) Անորոշ դերբայը. ասել>ասիլ, ասիլու, եփել>էփիլ, էփիլու, ներկել>նէրկիլ, նէրկիլու, ուտել>ուտիլ, ուտիլու և այլն։

դ) Տարբեր գոյականները. ինչպես՝ ծով>ծ՞ուվ, ծ՞ուվու, ջուր>ճ՞ուր ճ՞ուրու, լուսնակ>լուսնակ, լուսնըկու, գլուխ>կ'ըլ՞ուխ, կ'ըլ՞ուխու, հայ>խայ խայու, աստուած>աստվածծ, աստըծու, կորեակ>կուրիկ, կուրկու, ճնճղուկ>ճընջըղուկ, ճընջըղկու, մասուր>մասուր, մասուրու, մրջիւն>մըռճիմ, մըռճըմու, ուլունք>ուլնիք, ուլնիքու, պորտ>պուրտ, պուրտու, երեց>էրէց, իրիցու, վարժապետ>վարժապիտ, վարժապիտու, գող>կ'ող, կ'ողու, ժամ>ժամ, ժամու, կոիւ>կոէյվ, կըռվու, հող>խուղ, խուղու, մարդ>մարտ, մարտու, շերեփ>շիրիփ, շիրիփու, սով>սով, սովու, ահ>ախ, ախու, ձի>ծէի, ծիյու։

Երրորդ հոլովում՝ վան

Վան *(<ու + ան) հոլովման վերջավորություններն են՝ եզակի սեռ.* վան, *տրկ.* վան, *բաց.* -ից, -ուց, -էն, *գործ.* օվ/ օվ։

Ու.	*ամէ'ս*	*ամըսք'իր*
Ս.	*ամէ'սվան*	*ամըսք'իրու*
Տ.	*ամէ'սվան*	*ամսք'իրու*
Հ.	*(զ)ամէ'ս*	*(զ)ամը'սք'իր*

Ր. ամէ՛սվընէ ամրսք՛իրէն
ամսուց, ամսվանից
Ր. ամէ՛սով ամրսք՛իրով

Վ.ան հոլովման ենթարկվում են՝

ա) Ժամանակ ցույց տվող բառերը. ինչպես՝ գիշեր>քիշիր, երեկոյ>հիրկուն, երեկ>հէրէկ, զատիկ>զատէ՛գ, կիրակէ>կ՛ըրակէ, շաբաթ>շաբաթ, ուրբաթ>օրփաթ, տարի>տարէն, ցերեկ>ց՛էրէկ, օր>՞սր, ձմեռ>ծ՛ըմէռ, ամառ>ամառ, կ՛արուն (<գարուն) և աշ՞ուն (<աշուն) լինում են կ՛արնան, աշնան, իսկ ժամ (<ժամ) բառը՝ ժամը:

բ) Մահ և թոնիր բառերը. մախ—մախվան (հաճախ հնչյունների դրափոխությամբ գործածվում է խավան). թոնիր>թուն՛իր, թուրվա (այստեղ ընկել է վերջի ն-ն):

Չորրորդ հոլովում՝ ան/ան

Այս հոլովման պատկանող բառերը ունեն հետևյալ վերջավորությունները՝ եզակի սեռ. ան/ան, արկ. ան/ան, բաց. էն, ից, գործ. ով/ով:

Ան/ան հոլովման ենթարկվում են մի քանի կարգի բառեր.

ա) Երաբարում և հանգ ունեցող ա ներքին թեքման մի շարք բառեր. բուռն>պուռ, պըռան, գառն>կ՛ատ, կ՛ատան, դուռն>տ՛ուռ, տ՛ըռան, կուռն>կ՞ուռ, կըռան, ձուկն>ծ՛՞ուկ, ծըկան, նուռն>նսռ, նըռան, մուկն>մ՞ուկըն, մըկան, ասեղն>աս՞էղ, ըսղան:

Հոլովման պատկերը հետևյալն է.

Ու.	մ՞ուկըն	մըկնիր
Ս.	մըկան	մըկնիրու
Տ.	մըկան	մըկնիրու
Հ.	(ը)մ՞ուկըն	(ը)մըկնիր
Բ.	մըկէն, մըկից	մըկնիրէն, մըկնիրուց
Գ.	մըկով	մըկնիրով

բ) Ուղղականում ու-ով վերջացող բառեր. ինչպես՝ տուն>տ՞ուն, տան, շուն>շ՞ուն, շան, անուն>անուն, ընվան, աշուն>աշ՞ուն, աշնան, գարուն>կ՛արուն, կ՛արնան, մածուն (<մածուն) բառը լինում է մածընի:

գ) Մի շարք այլ կարգի բառեր. ինչպես՝ աղջիկ>ախճէ՛գ, ախճըկան, այր>իրիկ, հիրկան, կին>կրնիկ, կրնգան, հորթ>հուրթէգ՛, հուրթկան, սեամ>սիմք՛, սիմքան, գիրկ>կ՛իրկ, կ՛ըրկան, սիւն>ս՞ուն, սըլան, ձիւն>ծ՞ուն, ծիլան, ժամտուն>ժամտուն, ժամտան:

Հինգերորդ հոլովում՝ օր

Այս հոլովման վերջավորություններն են՝
Եզակի— սեռ. օր, տրկ. օր, բցո. էն, ից, գործ. ով/ով.
Հոգն.— սեռ. ու, տրկ. ու, օն, բցո. օց, ից, (մ)էն, գործ. ով ով
Հոլովման պատկերը հետևյալն է.

Ու.	խէր	խէրիր	ախպէ՛ր	ախպէ՛րք՛իր
Ս.	խսր	խէրիրու	ախպսր	ախպէ՛րք՛իրու

Տ.	խօր	խէրիրու, խէրիրօն	ախպօր	ախպէ՛րք՛իրու
Հ.	(ըզ)խօր,	(ըզ)խէրիր,	(զ) ախպօր	(զ) ախպէ՛րք՛իրու,
	(ըզ)խէր	(ըզ) խէրիրու(օն)	ախպէր	(զ)ախպէ՛րք՛իր
Բ.	խօրէն,	խէրիրոց	ախպօրմէն, ից	ախպէ՛րք՛իրոց
	խօրից			
Գ.	խօրով	խէրիրով	ախպօրմով	ախպէ՛րք՛էրով

Այս հոլովման ենթարկվում են ուղղական այր>իր վերջավորվող բառերը, որոնք ազգակցական կապ են արտահայտում. մայր>մէ՛ր, մօր, եղբայր> ախպէ՛ր, ախպօր, սանահայր>սանախէ՛ր, սանախօր, հարեղբայր>խօրախպէր, խօրախպօր, սանամայր>սանամէ՛ր, սանամօր:

Վեցերորդ հոլովում՝ ուչ//ուչ

Այս հոլովման վերջավորություններն են՝

Եզակի— սեռ. ուչ//ուչ, տրկ. ուչ//ուչ, բցո. էն, ից, գործ. օվ//օվ

Հոգն.— սեռ. ու, ուց//ուց, տրկ. ու, ուց//ուց, բցո. էն, ուց//ուց, գործ. օվ//օվ.

Ու.	ք՛ուր	ք՛ըվուրք՛իր, ք՛ուրիր
Ս.	ք՛ուրուչ	ք՛ըվուրք՛իրու, ք՛ուրուց
Տ.	ք՛ուրուչ	ք՛ըվուրք՛իրու, ք՛ուրուց
Հ.	(ըզ)ք՛ուրուչ,	(ըզ)ք՛ըվուրք՛իր (ու)
	(ըզ)ք՛ուր	
Բ.	ք՛ուրուչէն, ք՛ուրից	ք՛ըվուրք՛իրէն, ք՛ուրուրուց
Գ.	ք՛ուրուչով	ք՛ըվուրք՛իրով, ք՛ըվուրք՛ով

Այս հոլովման տակ են անցնում ազգականություն ցույց տվող հետևյալ բառերը՝ աներ>անիր, անիրուչ, ընկեր>ընգ՛իր, ընգ՛իրուչ, կնքաւոր>ք՛օուր, ք՛օուրի, տանտիկին>տանտըկէն, տանտըկնուչ, տէր>տէ՛ր, տիրուչ, քենի> ք՛էնի, ք՛էնուչ, քոյր>ք՛ուր, ք՛ուրուչ, տանտէր>տանտէ՛ր, տանտըրուչ:

Տեր՛էր (<տայդր) և սկեսո՛ուր (<սկեսուր) բառերի սեռականը ունի իր (<որ) վերջավորություն՝ տէրի տօն, սկեսի տրդա (տեքոր տուն, կեսուրի տղան): Ցալ՛վ (<տալ) բառը պատկանում է ի հոլովման. տալի տօն:

Յոթերորդ հոլովում՝ ա//ա

Այս հոլովման վերջավորություններն են՝

Եզակի— սեռ. ա//ա, տրկ. ա//ա, բցո. ա//ա, ից, գործ. օվ//ով, է,

Հոգն.— սեռ. ու//ու, տրկ. ու//ու, բցո. ից, է, գործ. օվ//օվ

Ու.	Վ՛ան	տատըէկ	տատըէկտիր
Ս.	Վ՛անու	տատկա	տատըէկտիրու
Տ.	Վ՛անա	տատկա	տատըէկտիրու
Հ.	(ըզ)Վ՛ան	(ըզ)տատկա	(ըզ)տատըէկտիրու
Բ.	Վ՛անա, Վ՛անից	տատկէ	տատըէկտիրէ
Գ.	Վ՛անով, Վ՛անվէ	տատկով	տատըէկտիրով

Այս հոլովման ենթարկվում են՝

ա) Տեղանունները. ինչպես՝ Բաքու>Բաքու, Բաքվա, Երևան>Հէրէվան, Հէրէվնա, Հէրվանա, Ալաթ>Ալալաթ, Ալալաթա, Ոզմ<Հուզ՛էմ, Հուզ՛ամ, Վա-

բաղ>Վարաք, Վարաքա, Վան>Վան, Վանա. Ղարս>Կարս, Կարսա, Սասուն >Սասում, Սասմա, Նարեկ>Նարէկ, Նարէկա։

Շատախ անդանվան սեռականը լինում է Շատախու, իսկ Մուքս (<Մոկս) -ինը՝ Մուկաց։

բ) Ուղղական հոլովում ի-ով վերջացող բառերը. ինչպես՝ կատիկ>կատրէկ, կատկա, պապիկ>պապրէկ, պապկա, մամիկ>մամրէկ, մամկա, տատիկ >տատրէկ, տատկա։

գ) Մի քանի բառեր և անձնանուններ. ինչպես՝ տղայ >տրդէ՛ն, տրդա, փեսայ>փէսէն, փէսա, Արշակ>Արշակ, Արշակա, Ավետիս>Ավրէտէ՛ս, Ավէտսա, Ասորով>Ասորբ, Ասորվա։

Ութերորդ հոլովում՝ ο

Եզակի— սեռ. ο, տրկ. ο, բցռ. մէնէ, (բառ-մասնիկ) գործ. ով//օվ.
Այս հոլովման պատկերն է.

Ու.	Բոզο	Հ.	Բոզο(-ն)
Ս.	Բոզο	Բ.	Բոզο մէնէ
Տ.	Բոզο(-ն)	Գ.	Բոզոյով

Ο հոլովման ենթարկվում են՝

ա) Ο-ով վերջացող կրճատ անձնանունները, որով իրար նման են ուղղականը և սեռականը.

Հակο (<Հակովբ), Հակο, Մրկο (Մկրտիչ), Մրկο, Կրրտο (Մկրտիչ), Կրրտο, Զաքո՛ο (Զաքար), Զաքո՛ο, Հարο (Հարություն), Հարο, Համբο (Համբարձում), Համբο։

բ) Որտեղացի ցույց տվող բառերը. ինչպես՝ աշտարակցի>հաշտարակցի, հաշտարակցο, երևանցի>հէրէվանցի, հէրէվանցο, ողմեցի>վոզրմցի, վոզրմցրο։

Մի քանի նման բառեր սեռականում ունեն ի հոլովիչ. ինչպես՝ ղարաբաղցի>կարաբախցի, կարաբախցրի, վանեցի>վանրցի, վանրցէրի, վանրցուց, վանրցով, շատախցի>շատրիցի, շատախցիրի։
Մոկացի (<մոկացի) բառի սեռականը լինում է մուկացուց։

Իններորդ հոլովում՝ կա

Այս հոլովման վերջավորություններն են՝
Եզակի— սեռ. կա, տրկ. կա, բցռ. մէնէ, (բառ-մասնիկ) գործ. ով//ով.

Ու.	Հակո՛օփ	Հ.	Հակո՛օփ
Ս.	Հակո՛օփկա	Բ.	Հակո՛օփ մէնէ
Տ.	Հակո՛օփկա	Գ.	Հակո՛օփով

Կա հոլովման են ենթարկվում մի շարք անձնանուններ. օրինակ՝ Դավիթ>Տավրէկ, Տավկա, Հակոբ>Հակո՛օփ, Հակո՛օփկա, Մարգարիտ>Մարկ՛ըրրէտ, Մարկըրտկա, Մուրադ>Մուրադ, Մրուդկա, Պետրոս>Պէտրուս, Պէտրուսկա, Պողոս>Պուղուս, Պուղուսկա, Ասորով>Ասորով, Ասորովկա, Կարապետ>Կարապիտ, Կարապրտկա, Գրիգոր>Կ՛ըրուկուր, Կ՛ըրուկուրկա, Մարգար>Մարքար, Մարքարկա, Անուշ>Անուշ, Անուշկա, Հուսիկ>Հուսիկ, Հուսկա։

Տասներորդ հոլովում՝ ը

Այս հոլովման սեռականն ունի ը վերջավորություն, բացառական ից, գործ. ով օվ. Լեզու>լիզու, լեզվը, լեզվից, -էն, լեզվով, սամի>սամ'ի, սամը, սամ'ից, սամ'օվ, հարան>խ'արս, խ'արսը, -ից, -օվ, ժամ>ժամ, ժամը, աղեղն>անէղ, անըգը, ակն>ակ, ակը, ծիրտ>ծ'էրտ, ծ'էրտը, կծիկ>կրծէյգ, կըծկը, ուղեղ>ըղէղ, ըղըղը, տիկ>տիկ>տ'էկ, տըկը, գիկ (աքլոր), գիկը։

Տասնմեկերորդ հոլովում՝ ց

Այս հոլովման պատկանող բառերը չունեն եզակի թիվ, գործածվում են միայն հոգնակի։ Հոգն. ուղղականում ունեն -ք վերջավորություն, որից առաջ՝ էն, ան, օն, որ լինում է էնք, անք, օնք։ Սեռ. ց, տրկ. ց, բցո. ից, գործ. օվ, Նուշիկէնք — նուշիկանց, մրչօնք — մրչօնց, Տավրէթ — Տավթանց, Հակ'օփէնք — Հակ'օփէնց։

Գրաբարյան հոլովաձևեր

Կան ոչ մեծ քանակությամբ բառեր, որոնք բացի այս կամ այն սովորական հոլովման ենթարկվելուց, ունեն նաև գրաբարյան հոլովաձև։ Դրանցից են՝ էլ (օտար մարդ), էլոց (<այլ. այլոց), աչք — աչիչ, ատամ — ատման (և ատամի), խելք — խէլաց (և խէլք'ի), խօսք — խօսաց (և խօսկու.), ծէ'ռ — ծէռաց (և ծէռքի), մէչկ — մէճաց (և մէճկ'ի), միտք — մըտաց, վ'ոտն — վ'ոտաց, կամք — կամաց, փառք — փառաց (փառքի), վանք' — վանից (և վանք'ի), օր — ավուր (և օրվա. օրվան)։

Ա Ծ Ա Կ Ա Ն

Ոգմի բարբառում երկու տեսակի ածականները (որակական, հարաբերական) խոսքի մեջ շարադասվում են գոյականից առաջ և չեն համաձայնում նրա հետ ոչ թվով, ոչ հոլովով. օրինակ՝

տ'ալար ճօղ, տ'ալար ճըղիր, տ'ալար ճըղէն, տ'ալար ճըղիրէն և այլն։

Համեմատության աստիճանները

Ածականի համեմատության աստիճանները երեք են՝ դրական, բաղդատական, գերադրական։

Բաղդատական աստիճանը կազմվում է՝

ա) Համեմատելի առարկան բացառական հոլովով, իսկ ածականը դրական աստիճանով գործածվելու միջոցով.

Ինչպես՝ իմ խէր քու խարէն ճուչ ա (իմ հայրը քո հորից մեծ է)։

բ) Ուղղական հոլովով համեմատելի առարկայի վրա ք'անց, չընց (<քան ղ) գործածվելով. ինչպես՝

իմ տրդէն ք'անց քու ախչէ'գ' ճուչ ա.
մէ բաղ չընց ծիր բաղ լէն ա։

Առանց ածականի, երկու կամ ավելի գոյականների հետ ք'անց կապը արտահայտում է սոսկ համեմատվող և համեմատող առարկաների՝ իրար նկատմամբ ունեցած նմանությունը. ինչպես՝ ախճէ'գ' ք'անց լ'ոսնակ, մէր ք'անց արիվ (աղջիկը՝ ինչպես լուսին, մայրը՝ ինչպես արև)։

գ) Բաղդատական աստիճանի իմաստը սաստկացնելու նպատակով հիշյալ ձևերին ավելանում է հավելի (<ավելի) կամ դըհա փոխառյալ (թուրքերենից) բառը. օրինակ՝ էսա կ'ըէդ էնա կ'ըէդէն հավելի (դոհա) մէնձ ա (այս գյուղը այն գյուղից ավելի մեծ է)։

Իմաստի սաստկացման նպատակին է ծառայում նաև շատ բառը. օրինակ՝ շատ օրախ տըղէ'քտիր. շատ հէրկէ'ն կ'իտ (շատ ուրախ տղաներ, շատ երկար դնա)։

Դերադրական աստիճանի կազմությանը երկու միջոց կա՝

ա) համմէնեն բառը ածականից առաջ դործածելու. ինչպես՝

համմէնեն ճուչ տըղէն կ'էթա (ամենամեծ տղան գնում է).

համմէնեն ծուռ, համմէնեն խամով և այլն։

բ) Ածականը կրկնելու, ըստ որում կրկնվող ածականը ուղիղ ձև է ունենում, իսկ դրա նախորդ ածականը գործածվում է գոյականաբար և ունենում է հոգնակի բացառականի կամ սեռականի ձև. ինչպես՝ ծ°ուռերու ծ°ուռ (ամենագիժ), խ°օրտք'իրեն խ°օրտ (ամենագեղեցիկ) և այլն։

Ածականը հոլովվում է, երբ գոյականաբար է գործածվում։ Այս դեպքում ենթարկվում է մեծ մասամբ ի հոլովման.

լավ—լավ. լավի, պինդ—պ°էնդ, պ°էնդի, պընդի.

գեշ—կ°էշ, կ°էշի, հաստ—խաստ, խաստի և այլն։

ԹՎԱԿԱՆ

Քանակական թվականներն են՝ 1 մէկ, 2 յէրկո, 3 յիրէք', 4 չուրս, 5 խէ'նգ', 6 վից, 7 յոթ, 8 օթ, 9 է'ն, 10 տաս, 20 քիսան, 30 յէռսօն, 40 քառսօն, 50 հէ'սօն, 60 վաթսօն, 70 յոթանասուն, 80 ութանասօն, 90 ինըսօն, 100 խարիր, 1000 խազար, 1000,000 մըլյոն։

Բարդ թվականները կազմվում են՝

ա) Տասնավորներին միավորների պարզ կցումով. ինչպես՝ 11 տրսրնմէկ, 14 տրսրնըչուրս, 15 տրսրնխէ'նգ' և այլն։

բ) Տասնավորների ու բաղաձայնով սկսվող միավորների միջև ը ձայնավորով. ինչպես՝ 21 քրսանըմէկ, 27 քրսանըյոթ, 41 քառսօնըմէկ և այլն։

գ) Տասնավորի և ձայնավորով սկսվող թվականի միջև վ բաղաձայնի ավելացումով. ինչպես՝ 12 տրսրվէրկո, 13 տրսրվիրէք', բայց՝ 72 յոթանասունյէրկո։

Քանակական թվականները գոյականաբար գործածվելիս հոլովվում են՝ ենթարկվելով -ի հոլովման.

1. մէկ, մէկի, մէկից, մէկով. 2. յէրկո, յէրկոսի. 3. յիրէք'. յիրէք'ի. 4. չուրս, չուրսի, չուրսից, չուրսով և այլն։ 20. քիսան, քիսանի, 30. յէռսօն, յէռսօնի, 100. խարիր, խարիրի։

Բարդ թվականների կազմության և հոլովման ժամանակ տեղի է ունենում հնչյունափոխություն։

Տաս (<տասն) թվականը երբ միանում է բաղաձայնով սկսվող միավորի, դառնում է տրսրն (տրսրնխէ'նգ'), իսկ ձայնավորով սկսվող միավորին կցվելիս՝ տրսր (տրսրվիրէք')։

Քսանից հետո եկող տասնավորները սովորաբար չեն գործածվում. դրա համար հիմք է ընդունվում քսանը և ավելացվում տասնավորը կամ բազմապատկվում քսանը։ Այսպես՝ քիսան և տաս (30), յէրկո քիսան (40), չուրս քի-

սան (80) և այլն։ Սրանց ավելանում են նաև միավորները. օրինակ՝ յէրկ-քիսան ու խէ՛նգ (45), յիրէք՝ քիսան ու չուրս (64) և այլն։

Դասական թվականներ Ոզմի բարբառում չկան։

Բաշխական թվականները կազմվում են քանակական թվականների կրկնությամբ. ինչպես՝ մեկ-մեկ, յերկո-յերկո, յիրեք՝-յիրեք՝, չուրս-չուրս, վից-վից, տաս-տաս և այլն։

Չափական թվականները կազմվում են -նոց մասնիկով, որը դրվում է քանակական թվականի վրա. ինչպես՝ մեկնոց, յիրեք՝նոց, տասնոց և այլն։